



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



3612



281.G

f-27

2010

W 2001



ՀՐԱԻԷՐ

ՍԻՐՈՅ

APPEL A L'AMOUR  
ÉVANGÉLIQUE

---

Փարիզ, Տպագրութիւն Արմ. Ի Տպար. Վալտերի :  
Paris. Typ. Arménienne de Walder, r. Bonaparte, 44.



281.6

✓

Բ - 27

ԲԱՆ

# Հ Ր Ա Ի Է Ր Ս Ի Ր Ո Յ

ՈՐ ԱՌԱՋԻ ԱՌՆԷ ԶՊԱՏԱՍԻԱՆԻ ԽՆԴՐՈՅ  
ԻՆՉ ԻՆՉ ՄԱՍԱՆՅ ՀԱԻԱՏՈՅ

ԸՍՏ

ԼՈՒՍԱԻՈՐԶԱԴԱԻԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ

ԱՌՍՔԵԼԱԿԱՆ

Ս Ո Ի Ր Բ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՀԱԻԱՆՈՒԹԵԱՄԲ ԵԻ  
ԽՆԴՐԱՆՕՔ ՏՊԵՍԼ

ՎԵՐՍՏԻՆ ՏՊԱԳՐԵԱԼ

Ծ Ա Խ Ի Ի Ք

Գ. Վ. ԽԱՊԱՌԱՃԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Գիւն հիւնգ Յոսանք.

ՓԱՐԻԶ

1857

Printed in Turkey



Handwritten mark at the bottom center.

11108



инв. 543

1375  
39

## ԿԱՐՃԱՌՕՏ ԲԱՆ ՏՊԱԳՐՈՂԻՆ

Այս քի գրականաց եւ հմտագունից յազգիս Հայոց, ոչ անգիտանայ՝ թէ այս մերս բաժանմունք ի մեծ եկեղեցւոյն՝ եղեւ պատճառ եւ սկիզբն ամենայն ազեաից եւ թշուառութեանց որ եկին հասին յօրէ յայնմանէ ի վերայ համօրէն ազգիս :

Բաժանմունք յայլոց ազգաց, բաժանմունք եւ սրտատմունք զեւս անբերելի՝ համազգի համաբիւն միոյ հօր որդւոց, ոչ վասն այլ իրիք պատճառի բայց եթէ, մի մասն ուսեալ եւ խելամուտ լեալ, թէ այն բաժանմունք ի մեծ եկեղեցւոյն ոչ լինելով ուղիղ եւ օրինաւոր, հակեցան միտեցան

ի կողմն նորա եւ ի վարդապետութիւն,  
Թերեւս անդր քան զչափն: Եւ միւս մասն՝  
Թէ իցէ օրինաւոր եւ իրաւ, կապեալ պըն-  
դեցան ի բաժանմանն՝ անդր քան զչափն:  
Եւ ահա մարտ ի ներքուստ եւ արհաւիրք  
յարտաքուստ. որում հետեւաբար զկնի՝  
ընծիւղեցան զրպարտութիւնք՝ ատելու-  
թիւնք՝ դարանագործութիւնք՝ խորշումն  
յիրերաց հալածումն եւ հայհոյութիւնք քա-  
նիւ եւ գրով աղետք անթուելիք եւ այլն:

Այսր աղետի որ մերթ ընդ մերթ սաստ-  
կանայր, եւ մերթ թուլանայր ըստ զանա-  
զան սպարազայից ուր գտանէր ազգն մեր,  
Պետք եւ Հայրապետք ի դարս դարս շար-  
ժեալք յաւետարանական սիրոյ՝ խնդրե-  
ցին դեղ եւ դարման խաղաղութեան հայթ-  
հայթել՝ ընդ արտաքինս եւ ընդ ներքինս:  
մանաւանդ յաւուրս Ներսիսեանց Շնոր-

հալոյ եւ Լամբրոնացւոյ . յորոց բանիցն հասու լինիմք, որք առաւել բանաւորագոյն եւ դիւրանսաց գտին ի խաղաղութեան բան զարտաքինս, որքան ընդդիմակաց եւ բանակոխ զներքինսն՝ որպէս եղեն տուտէորդիք ճորագետացիք եւ այլք հետեւողք նոցա : որոց արբանեկութեամբ չարասէր ոգին միշտ խափան էարկ յառաջադիմութեան բարւոյն : Բայց ոչ երբէք յուսահատ եղեն ոմանք ոմանք զիտնականք եւ ազգասէրք, որք հասին ի պատիւ գլխաւորութեան ժողովրդեանն՝ հնարքս գտանելոյ այսր սրտատենջ խաղաղութեան եւ անհետ առնել զթշնամութիւն :

Թողում ասել մի առ մի զանցեալ նախնի պատմութիւնս վասն այսր իրի, որ քաջայայտն է ընթերցասիրաց, փութամ գրել զորս ի մերումս ժամանակի ի նոյն

ձեռնարկութիւն միաբանութեան բուն հարին հաւանութեամբ եւ հրապարակամեծաց եւ փոքունց : Զժողովն ասեմ կամ Սիւնհօթն կամ ի միժողովումն՝ որ եղել ի Եէնի խափու ի 1820 յաւուրս Գերամեծար Պատրիարքութեան Տեառն Պօղոսի, ձեռնտուութեամբ ամենայն զգերց ընդ իւրով իրաւասութեամբ եղելոց . եւ համօրէն Ամիրայից յԷջմիածնականս եւ Հռոմէականս բաժանելոց, առ ի բառնալ ի միջոյ զխոչ եւ զխուծ անմիաբանութեանն :

Եւ քանզի այսմ չէր հնար լինել եծէ ոչ ձեռնտուութեամբ քաջակիրթ վարժելոց ի դպրութիւնս նախնեաց սրբոց Հարց՝ յերկուց կողմանց գալ ի միասին եւ ապացուցանել ի նոցին զրոց զվնասն սպրդեալս ոմանց նախապաշարելոց մտաց եւ խռոյվասիրաց յուրեք ի պաշտամունս՝ որ

նչ սակաւ տայր տեղի բաժանման :

Այլ քանզի Պատրիարզն որպէս յայտ է, կարգեալ ի տէրութենէ ունի իշխանութիւն ի վերայ ժողովրդեան Հայոց հոգեւորական, միանգամայն եւ աշխարհական, բայց որովհետեւ հռոմէականք ոչ էին ընդ նորին հոգեւորականաւն, զանդազէին ի կոչումն նորա եւ ի մի ժողովումն վասն այսրը իրի : Այլ նա իւրով համոզական ազդու բանիւ եւ բանաւոր պատճառանօք, նաեւ ի կողմանէ իսկ տէրութեան հրամանաւ՝ ստիպեաց հարկեցոյց զԻշխանս եւ զԱղայս հռոմէականս առ ի բերել եւ յղել յայս եղբայրական հանդիսարան վեց, ուծն, որքան կամիցին՝ Վարդապետս, զի ընդ գիտնականաց եւ Վարդապետաց իւր կողմանն նստեալ բանախօսեսցին ի յայտարարութիւն ուղղութեան :

Արդ՝ այս իշխանք հոռութեամբ մասինն, եկին գտին զմեզ ազաչելով՝ եւ մինչեւ յոտս մեր անկեալ, փրկել ի փորձանաց զնոսա հաւաստեալ կասկածելոց ի տէրութենէ . եւ միանգամայն մի յամօթ առնել զնոսա իբր դժբողս խոստմանց առաջի մեծամեծաց ազգին . եւնէ լիցուք անունկընդիր ազերոսանաց նոցա, կամ ծածկելով յանքոյթ տեղիս՝ որպէս զբազում երկնակիցս . կամ խոյս տալ յօտար երկիր :

Եւ որովհետեւ եւ այս հրաւեր ի մի տեղի, ոչ էր ժողով իմն ընդդէմ հերեսիովտաց առ ի ցրել զմոլորութիւն նոցա ի բանից սուրբ Գրոց, եւ նոր բացատրութիւնս յաւելուլ ի նոսա՝ եւ սահմանս . այլ զուտ սլարզաբանութիւն եւ ուղիղ իմացումն բանից մերոց սուրբ Հարց հայաստանեայց եկեղեցւոյն, վասն որոյ ոչ եղեւ



մեզ հարկ կալ մնալ ի կարգի եւ կանոնի, որովք հաւաքին կանոնական ժողովք, եւ խնդրել զայն, որ ասի ՖՕՌՄԱԼԻԹԷ. եւ կարէաք իսկ ո՛չ, վասն ստիպելոյ պարագայից ժամանակին :

Ուստի անյապաղ եկեալք ժողովեալք ի միասին՝ առաջի եղան զրեանք մեր սրբոց Հարցն, քննեցան յեղյեղեցան երկու ամսով չափ նոցին բացայայտ եւ ուղղափառ վարդապետութիւնք, որք պաշտին միշտ յեկեղեցիս Հայոց : Այլ հերքեցան նորամուտ մեկնաբանութիւնք եւ մեկնիչք խռովայոյզք, հանդերձ խրթնացեալ ինչ ինչ սովորութեամբք ի տեղիս տեղիս մուծեալք յանոպայից ոմանց ի զայթակղութիւն ճշմարտասիրաց : Զորս արժան դատեցին ամենայն ժողովականք Նպիսկոսք եւ Վարդապետք զրովք արձանա-

ցուցանել զայն ամենայն ի շինութիւն եւ  
ի միաբանութիւն երկուց կողմանց. որոյ  
վասն տպագրեցաւ այս փոքրիկ գիրք,  
ՀՐԱԻԷՐ ՍԻՐՈՅ անուամբ, հանդերձ սիրա-  
յորդոր Յառաջաբան եւ Վերջաբան լրու-  
թեամբ : Այս գիրք ոչ է նման ինչ ինչ  
տետրակաց եւ գրուածոց ոմանց մասնա-  
ւորաց, որքէն ի ցոյց իւրեանց կարծեաց եւ  
համոզմանց. որք ոչ ունին զայս ծանրու-  
թիւն, Թէպէտ եւ իցեն ուղղութեամբ զը-  
րեալք : Այլ այս գիրք ասեմ, միահամուռ  
միաբան ժողովելոց զլխաւորաց եւ դիտաց  
ուղիղ վարդապետութեան եւ վարուց,  
Կաթողիկոսի, Պատրիարզի, Վարդապե-  
տաց եւ Իշխանաց, կնքով եւ ստորագրու-  
թեամբ դատեալ եւ վճռեալ՝ է իբր արձան  
իմն յիշխակի կանգնեալ առ յապայս  
եկեւոց, կամ Փարոս առաջի ժողովրդեան :

Եւ քանզի ո՛չ եղեւ եւ ո՛չ ուրեք երեւե-  
ցաւ զկնի՛ մինչեւ ցայս օր այսպիսի իմն  
հանդէս գումարման կամ ժողով՝ առ ի  
ստգտանել եւ սպօրինաւոր ինչ ի նմա  
գտանել իբրեւ ընդդէմ սահմանաց եւ կա-  
նոնաց մեր երանելի սրբոց Հարց գործեալ,  
սպա ուրեմն հեղինակութիւն եւ վաւերա-  
կանութիւն սորա միշտ կայ եւ մնայ ան-  
զրդուելի եւ հաստատուն :

Այլ սակայն, միթէ ակնունելի էր թէ  
այս իրակութիւն ո՛չ անցցէ ընդ փորձ  
վայրաբանութեան հակառակասիրաց՝ որ-  
պէս առաջիւնքն : Քանզի ի յառնիլ բանից  
վիճից եւ կրկտանաց՝ յերկուց կողմանց,  
ի նախանձուէ սսեմ, մանաւանդ յա-  
նուսումնութենէ, մինն՝ թէ այս ո՛չ է բա-  
ւական առ անթերի ուղղափառութիւն,

եւ միւսն՝ Թէ քան զչափն առաւել եղեւ  
զիշոյղութիւնն , այլովքն հանդերձ :

Ահա ծագեցաւ ամբո՛խումն եւ խռովու-  
թիւնն մեծ ի ժողովրդեան . . . Յայս զբա-  
ղեալ ամենեցուն ըստ իւրաքանչիւր տրա-  
մադրութեան մտաց եւ հնացեալ սովորու-  
թեան, եւ ի սպառելոյ օրինակաց ԳՐՔՈՅՆ,  
զոր գէթ կրկին եւ կրկին ընթեռնելով Թա-  
փանցէին յիմաստն համառօտ գրելոցն,  
որք են բացածայնութիւնք ուղղափառու-  
թեան սրբոց Հարցն մերոց : Եւ այսպէս  
առ սակաւ սակաւ ի մոռացօնս անկաւ,  
նչ յիշատակ այսր անցից ժողովոյն , այլ  
հոգին գրոյն՝ եւ ճիզն միակամ անդր ժո-  
ղովելոցն յՍկզբնաւորութիւն սիրոյ միա-  
բանութեան եւ Ազգայնութեան :

Արդ՝ ես Ստորագրեալս ելով մի յան-

դամոց այսր բարեխոհ հանդիսարանի, եւ միանգամայն ստիպեալ ի խնդրոյ ճըշմարտասէր հետաքննաց՝ պիտի համարեցայ անձինս վերստին տպագրել զայն սիրայորդոր ԳՐԳՈՅԿ՝ բառ առ բառ ամենայն հաւատարմութեամբ, ի խորհրդածութիւն Լուսաւորչականս ժողովրդեան առ ի պայծառ եւ մեկն հասկացողութիւն բանից եւ մտաց անդր եղելոցն. ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ մերային սրբոց Հարց, եւ յօգուտ եւ ի շինութիւն հայկազնեայց :

Գ. Վ. Խ. Կ.



1375  
39



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

UNIVERSITY OF TORONTO

LIBRARY

1285 UNIVERSITY AVE.

TORONTO, CANADA

M1S 1A5

1950

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000

100-100000


100-100000

100-100000

100-100000

100-100000





ԵՐԱՆԱՇՆՈՐՀ

ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՍՐԲՈՅՆ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐԶԻ

ԵՒ

ՆՄԻՆ ԱՇԱԿԵՐՏԵԼՈՅ

ՍՐԲՈՅ ՀԱՐՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ք

ԵՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՄԻԱՅՆՈՅ ՍՈՒՐԲ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

ՔՐԻՍՏՈՍԻ







ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

**Խ**աղաղաւրարն տիեզերաց Տերն մեր  
Յիսուս Քրիստոս որ գմիջնորմն  
ցանկոյն քակեաց՝ եբարձ գթշնամին  
արդարութեան, եւ զագգս մարդկան  
ժողովեաց՝ ի մի խաչիւն իւրով, ի  
վերջին կտակի իւրում գերկնաւոր  
խաղաղութիւն՝ որ ի վեր է քան գմի-  
տըս եւ գբանս, շնորհեաց իւրոց աշա-

կերտաց' յասելն. « Խաղաղութիւն թողում ձեզ, գիւաղաղութիւն գիւմ տամ ձեզ <sup>1</sup> : »

Զսոյն եւ անօրն Աստուածային' շընորհաց ճաշակմամբ գմայլեալ քարոզէ. « Ի խաղաղութիւն կոչեաց գմեզ Աստուած <sup>2</sup> » եւ արքայութիւն Աստուծոյ յինիլ ցուցանէ, ըստ այնմ. « Զի ոչ է արքայութիւնն աստուծոյ կերակուր եւ ըմպելի. այլ' արդարութիւն եւ խնդութիւն եւ խաղաղութիւն ի Հոգին սուրբ : Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստուծոյ եւ ընտիր մարդկան <sup>3</sup> : » Ապա' այս բազմարդիւն պարգեւիս

---

<sup>1</sup> Յովհ. ԺԴ 27 : — <sup>2</sup> Ա. Կորնթ. Է 15 :

<sup>3</sup> Հռովմ. ԺԴ 17 :

զարմատն առ ի հաստատել ի մեզ՝  
փրկիչն հետեւաբար պատուիրէ ամե-  
նեցուն սիրել զմիմեանս, ըստ այնմ.  
« Պատուիրան նոր տամ ձեզ, զի  
սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես  
զձեզ <sup>1</sup> : »

Իսկ սկզբնաչար բանսարկուն՝ զիր  
սերմն չարութեան սերմանեալ հանա-  
պագ բուսուցանէ զխռովութիւն զատե-  
լութիւն, հեռ՝ նախանձ, հակառակու-  
թիւն, երկպառակութիւնք, հերձուածք.  
յորոց ծագին կամակորութիւն, տգի-  
տութիւն, եւ այլ անկարգութիւնք,  
ի կորուստ մարդկան : Եւ զի՝ իմաս-  
տութիւնն լոյս է. եւ « Սմենայն ինչյան-

---

<sup>1</sup> Յովհաննու ժԳ 34 :

գայթա չարին, իբր կոյր գկուրայն  
խարխափին ի վին կորստեան :

Ջի գոր օրինակ բազում բոյսք են  
յերկրի. գորս գիտուն բժիշկք՝ ըստ  
ախտին եւ ըստ անձին ընտրեալ՝ ա-  
ռողջութեան դեղս առնեն. եւ գնոյն  
բոյսս դարձեալ տգետ բժիշկք՝ ծանր  
հիւանդութեան եւ մահու տան պատ-  
ճառս, տգիտաբար վարելովն ի նոսա :  
Այսպէս է տեսանել եւ ի բանս սուրբ  
գրոց՝ եւ սրբազան վարդապետաց. առ  
որս ի բազմաց զմինն բերեմք օրինակ :

Ի Քրիստոս ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆ Եւ ԵՐԿՈՒ  
ԲՆՈՒԹԻՒՆ խոստովանութեանն, են եր-  
կաքանչիւր հակառակ իմաստք, ուղ  
ղափառական եւ հերետիկոսական :  
Ուղղափառական՝ որպէս խոստովա-  
նին սուրբ հարքն՝ Կիւրեղ եւ Գրիգոր

գայթա ջարին, իբր կոյր գկուրայն  
խարխափին ի վին կորստեան :

Ջի գոր օրինակ բազում բոյսք են  
յերկրի. գորս գիտուն բժիշկք՝ ըստ  
ախտին եւ ըստ անձին ընտրեալ՝ ա-  
ռողջութեան դեղս առնեն. եւ զնոյն  
բոյսս դարձեալ տգետ բժիշկք՝ ծանր  
հիւանդութեան եւ մահու տան պատ-  
ճառս, տգիտաբար վարելովն ի նոսա :  
Այսպէս է տեսանել եւ ի բանս սուրբ  
գրոց՝ եւ սրբազան վարդապետաց. առ  
որս ի բազմաց զմինն բերեմք օրինակ :

Ի Քրիստոս ՄԻ ԲՆՈՒԹԻԻՆ Եւ ԵՐԿՈՒ  
ԲՆՈՒԹԻԻՆ խոստովանութեանն, են եր-  
կաքանջիւր հակառակ իմաստք, ուղ  
ղափառական եւ հերետիկոսական :  
Ուղղափառական՝ որպէս խոստովա-  
նին սուրբ հարքն՝ Կիւրեղ եւ Գրիգոր

աստուածաբան . Հերետիկոսական՝  
որպէս հայհոյեցին Նւտիքես եւ Նես-  
տոր : Սուրբ վարդապետք՝ ընդդէմ  
իւրաքանչիւր հերետիկոսաց գրեալ են  
գրանս . մինչ հակառակ միոյն խօսին,  
ի միւսոյն կողմն համարին՝ տգետքն :  
Զի սուրբ հարք՝ ուր ընդդէմ չարաչար  
բաժանողացն խօսին, գանշփոթ միա-  
ւորութիւնն առաջի առնեն . եւ յորժամ  
ընդդէմ շփոթմամբ միացուցանողաց  
խօսին, գլատկութիւնս բնութեանցն  
ցուցանեն : Զայսոսիկ իմաստունք  
ՈՒՂՂՍՊԷՍ ԴՍՏԵՍԼ ըստ տեղւոյն եւ  
ըստ անձին քաջ գանաւգանեն, եւ որո-  
շեն գմիտս գրելոցն . եւ ուղղափառ  
վարդապետութեամբ յաջ եւ յահեակ  
հարկանեն զհերձուածողսն :

Իսկ տգետք եւ հակառակասերք

ՄՈՂՈՐԻՆ յայսոսիկ, զի ոչ կարեն ընտրել ըստ ժամանակին եւ ըստ անձին. եւ առ տեղեալն ՈՉ ՀԱՅԻՆ յառաջ եւ ի վերջ գրելոցն. եւ ոչ քննեն եւ ոչ իմանան զպատճառն, վասն որոյ խօսին զայնպիսիսն :

Այլ բաժանասերքն՝ հակառակասիրութեան իւրեանց ջատագովս առնուն զբանսն, զորս ընդդեմ շփոթողացն զբնութիւնս եղին սուրբ հարքն : եւ որք ի միացուցանելն յօժարին, ի վկայութիւն ասացելոց իւրեանց բերեն զմիութեան բանս. զորս հակառակ բաժանողաց խօսեալ են սուրբ վարդապետք :

Ահա այս եղեւ պատճառ բազմաց հակառակութեան եւ հերձուածողաց կորստեան ի սկզբանէ մինչեւ ցայժմ.

որք ըստ հակառակասէր եւ անձնասէր  
բնութեան, հակառակին՝ յաղթել աշ-  
խատին. եւ յանդգնին ի հակասութիւնս  
եւ ի գրպարտութիւնս: Եւ այս՝ ո՛չ ընդ  
օտարս . այլ՝ միոյ սուրբ աւագանի  
ծնունդք, միոյ հօր սուրբ Լուսաւորջի  
հարազատ գաւակունք, ազգակիցք եւ  
արիւնակիցք անգոսնեն եւ արհամար-  
հենգիրեարս. գմիմեանս ՀԵՐՉՈՒՄ.ԾՈՂ  
կոչելն՝ իբրեւ գարդարութիւն գիտեն,  
եւ արքայութեան ժառանգութեան պա-  
տճառս համարին. որով գժտութիւն  
եղբարց, անհաւանութիւն ծնողաց եւ  
զաւակաց, բաժանումն եւ աւերումն  
տանց, եւ այլ անթիւ չարիք : Ս.Ո որս  
բազում ճարտար բժիշկք՝ ՀՈԳԵԼՈՅՍ  
ՆԱԽՆԻՔ ՄԵՐ բազմապիսի հնարս հոգա-  
ցին ի դարման վիրացս, եւ մինչեւ



ցայժմ չեղել բոլորովին բժշկութիւն.  
այլ օրըստօրե ճարակեալ՝ մահառիթ  
խոցուածօք կսկծեցուցանէին գհոգիս  
ազգասիրաց :

Այլ իբր տասն ամօք յառաջ սկիզբն  
առեալ սիրոյ՝ յաւուրս հանգուցեալ  
Յօհաննէս եւ Աբրահամ Աստուածա-  
րեալ Պատրիարգաց՝ գերապատիւ Իշ-  
խանք եւ յարգի Ամիրայք մեր՝ մինչ  
միաբանեցան յօգտակար գործս ազ-  
գիս. յորս նշոյլ իմն ՍԻՐՈՅ օր աւուր  
արժարժեալ՝ ի սիրտս ամենեցուն բո-  
ցափայլեցաւ. քանզի յայնժամ բան եւ  
խնդիր եղել յազգսմեր ի վերայինչ ինչ  
մասանց հաւատոյ. զի եթէ մարթ ինչ  
իցէ, ՌԻՂՂԵՍՅԻՆ այլեւայլ կարծիքն եւ  
ԲՍՐՁՅԻՆ երկպառակութիւնքն :

Ապա՝ գայտու ժամանակաւ եւս ստի-


պեայ ի բանաւոր պատճառաց՝ իբրեւ  
գերիս ամս կարեօք չափ աշխատու-  
թիւն կրեցաւ սիրայորդոր ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎՈՔ, վասն բժշկութեան այսր  
ցաւոց. որպէս եւ յայտնի եղեն խաղա-  
ղասէր ջանք ամենեցուն, եւ ՈՉ ՅԱՌԱՉԱ-  
ՑԱԻ ցանկալի խաղաղութիւն ազգիս.  
եւ թերակատար թողաւ վերնոյն զթու-  
թեան եւ ողորմութեան : Եւ զի ո՛չ իս-  
պառ անպտուղ մնացին իղձք ազգա-  
սիրաց. զի համայն ազգ մեր՝ զհոգիս  
իւրեանց իբր ողջակեզ պատարագ  
վերընծայեայ հայցեին զօգնութիւն յԱս-  
տուծոյ. եւ ակնունեին տեսանել զկա-  
տարումն պատուիրանին Քրիստոսի՝  
եւ վայելել զշնորհսն՝ ՋՄԷՐ եւ ՋԻԱ-  
ՂԱՂՈՒԹԻՒՆ. յորս միայն հաճեայ հոտո-  
տի Աստուած իբր խունկ անոյշ :

Եւ ահա՛ լցան հայցուածք աղօթից սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին. զի բարերարին կամք քաղցրացաւ. ԲԱՐՁԱԻ ԿՐՃԻՄՆ ՅԱՆԿՈՅՆ. անուշահոտութիւն սիրոյն օր աւուր ծաւալեալ բուրեցաւ ի քիմս ազգիս. այս պըտուղ հոգեւոր ճաշակաց՝ իբրեւ երկնատեղաց մանանայն պարգեւեցաւ մեզ ի վայելումն յագուրդ : Քանզի՛ համայն ազգիս խնամածու գլխաւորք՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ Եւ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ ի խնդիր ելեալ փափաքեցան գալ արքայութեանն Աստուծոյ երկնաւոր խաղաղութեանն ամենեցուն տիրել. եւ յոգնահանճար հոգածութեամբ ՔՆՆԵԱԼ գիտնոց ընդ գիտունս խօսելով, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ հաճութեամբ գտաւ եղանակ սիրոյն եւ խաղաղութեան :

Ձի ըստ ժամանակիս առաջարկեալ խնդրոց՝ եղաւ առաջի ուղղափառ խոստովանութիւն սուրբ Եկեղեցւոյս հայոց, ի վարդապետութեանց երկօս երանեալ սուրբ ԼՈՒՍՍԻՈՐԶԻՆ մերոյ, եւ ի նորին շառաւիղաց՝ ի սրբոյն ՆԵՐՍԻՍԷ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ : Որպէս զի աշխարհ ամենայն գիտասցե, թէ ոչ նորոգ եմուտ ի մեզ ուղղափառութիւնն. այլ զոր ի սկզբանէ ունեաք, եւ անխափան պաշտեաք յԵկեղեցիս մեր, նոյն եւ ՅԱՅՏՆԵՅՄԱԻ. եւ անփոփոխ ՈՒՆԻՄՔ ԵՒ ՊԱՀԵՄՔ իսպառ :

Ապա մերկացաւ պատրուակեալ սրտութիւն զրպարտչացն. ողորմութիւնն Աստուծոյ իբր լոյս՝ առ մերս ճշմարտութիւն ծագեցաւ. սեր եւ հաշտութիւն համբուրեցաւ . ուղղոց սրտից

եղև ուրախութիւն. զի ամենեքեանս  
հեռի եմք ի ՆԵՍՏՈՐԻ ԲԱԺԱՆՄԱՆԷՆ, եւ  
ՅԵՒՏԻՔԵԱՅ ՇՓՈԹՄԱՆԷՆ, եւ յամենայն հե-  
րետիկոսական կարծեաց. եւ միով  
ուղղափառ հաւատովք՝ եմք ի ՄԻ ՓԱ-  
ՐԱՍ ԿԱԹՈՒՂԻԿԷ եւ առաքելական ՍՈՒՐԲ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ժողովեալք՝ ընդ իշխանու-  
թեամբ քաջ հովուապետին Քրիստոսի.  
յորում ընդ ամենայն ուղղափառս եր-  
գակցեալ՝ յարեւելից մինչեւ ի մուտս  
արեւու ընդ ամենայն տեղիս քրիս-  
տոնեութեան ուր եւ կարդան զանուն  
տեառն սրբութեամբ, ընդ նոսին միշտ  
փառաւորեմք զամենասուրբ զԵՐՐՈՐ-  
դութիւնն զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ  
Հոգին յաւիտենից յաւիտեանս. Ամէն :



---

Յօժարեցաք եւս ԲՍՌՆԱԼ գկար-  
ծեալ խՈՉ ԵՒ ՉԽՈՒԹ՝ գպատճառսն բա-  
ժանման ազգիս. այս է՝ Ո՛Չ ՅԻՇԵԼ  
Եւ Ո՛Չ ՏՕՆԵԼ գայնոսիկ՝ ոյք կարծին  
ԱՐԳԵԼՔ ՍԻՐՈՅ :

Որք առ հասարակ շարադասեալ  
տեսանին ի ներքոյ :

---

Ս Ո Ւ Ր Ր

Ե Ի

# ՈՒՂՂԱՓԱՌ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅՈՑ

Ա Յ Ս Է

ՈՐՈՅ ՎԱՍՆ ՄԻԱՅՆ Է ԽՆԴԻՐՆ

—

Տերն մեր Յիսուս Քրիստոս ե Աստուած ճշմարիտ՝ եւ Մարդ ճշմարիտ. նոյն ինքն Որդի մարդոյ՝ եւ որդի Աստուծոյ. « Համագոյ Հօր ըստ Աստուածուբեան, եւ համագոյ մեզ ըստ

մարդկութեան <sup>1</sup>. » Ուստի ասեմք ընդ-  
դեմ Նեստորի՝ ՄԻ ԲՆՈՒԹԻԻՆ ՓՈԽԱ-  
ՆԱԿ ՄԻ ԱՆՁՆԱԻՌՈՒԹԵԱՆ. ասեմք եւս  
ընդդեմ Եւտիքի՝ ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻԻՆ ան-  
բաժանելի ի մի Քրիստոս, ըստ մտաց  
սուրբ Հարց եւ ժողովոց : Քանզի՝ Ո՛հ  
« ըստ Նեստորի ի յերկուս բնութիւնս  
« եւ ի յերկուս դեմս բաժանեմք զմին  
« Քրիստոս. եւ ո՛հ ըստ Եւտիքեայ եւ  
« համախոհից նորին՝ ի մի բնութիւն  
« ժողովեմք շփոթմամբ եւ այլայլու-  
« թեամբ : Այլ՝ ունիմք ասել զերկու  
« բնութիւն ըստ մեծին Գրիգորի աս-  
« տուածաբանի՝ յառ Կղօղիոս թղթին

---

<sup>1</sup> Ընդհանրական . 118 :



« գրեալ ընդդէմ Ապօղինարի , եւ  
« որոց ըստ նմա. եթէ ԲՆՈՒԹԻԻՆՅԵ ԵՐ-  
« ԿՈՒԲ. (յաւելու ասել եւ զպատճառն)՝  
« քանզի Աստուած եւ մարդ... : եւ  
« այլուր ասէ, եթէ ԿՐԿԻՆ ԷՐ, յայտ է  
« թէ բնութեամբ եւ ո՛չ անձնաւորու-  
« թեամբ : Իսկ զմի բնութեանն եղա-  
« նակ՝ զոր ասեմք մեք, մի ոք յայլ  
« դեմս կարծիցէ. բայց... զոր ուսաք  
« ի յուղղափառ վարդապետաց եկե-  
« ղեցւոյ. մանաւանդ ի սրբոյն Կիւր-  
« ղէ աղեքսանդրացւոյ , որ ընդդէմ  
« Նեստորի. որպէս եւ գրէ յառաջին  
« թղթին՝ որ առ Սեկունդոս. եթէ խոս-  
« տովանիմք ՄԻ ԲՆՈՒԹԻԻՆ Բանին մար-  
« մնացելոյ, որպէս և հարքն ասացին,

« փոխանակ մի անձնաւորութեան<sup>1</sup> : »

Սոյնպէս եւ ԿՐԿԻՆ լինել ԿՍՄՍՅ եւ  
ներգործութեանց ի միաւորութեան  
անդ՝ ԱՆՀՍԿՍՌՍԿՍ միմեանց. « Երբեմն  
« Աստուածային՝ յորժամ գԱստուա-  
« ծութեանն կամեր ցուցանել զգօրու-  
« թիւն. եւ երբեմն մարդկային՝ յոր-  
« ժամ գմարդկութեանն կամեր յայտ-  
« նել զխոնարհութիւն<sup>2</sup> : »

« Հաւատամք եւ ներգործութեանն  
« նոյնպէս լինել՝ աստուածայնոյն եւ  
« մարդկայնոյն ի միաւորութեան անդ :  
« ՄԻՈՅ ԱՆՁՆՍԻՈՐՈՒԹԵԱՆ զերկոսին

---

<sup>1</sup> Ընդհանրակ . 90. 144 : — <sup>2</sup> Ընդհանր. 119 :

« գայսոսիկ խոստովանիմք, երբեմն  
« որպէս զՍՍՏՈՒՍԾ՝ զԱստուածայինսն  
« ներգործելով, եւ երբեմն որպէս  
« ՋՄՍՐԳ՝ զՄարդկայինսն <sup>1</sup> : »

Իսկ զՀոգին սուրբ խոստովանիմք  
Հոգի Հօր եւ Որդւոյ : Քանզի ըստ  
սրբոյ Լուսաւորչին. « Հայր յանձնե,  
Որդի ի Հօրե՛ Հոգին սուրբ ի ՆՅՅՈՒՆՑ  
եւ ի ՆՅՍԻՆ <sup>2</sup> . » Վասն որոյ ասեմք ըստ  
Շնորհալոյն այսպէս թե՛ « Հոգին սուրբ  
ԲՂԽԻ Ի ՀՕՐԷ, եւ ՍՈՆՈՒ ՅՈՐԴԻՈՅ : Բըղ-  
խումն Հօր՝ անքննաբար, առօղ յոր-  
« դւոյ անճառաբար <sup>3</sup> . » եւ թե՛ « Ի հօրե  
« բղխումն հոգւոյդ ո՛չ քննեցան, եւ

---

<sup>1</sup> Ընդհ. 120: — <sup>2</sup> Ս.դաթ. 399: — <sup>3</sup> Շարակ 67:

« հոսման յորդոյ առումն ո՛չ պատ-  
« մեցան <sup>1</sup> . » եւ ըստ շարականին ,  
« Աղբիւր կենաց եւ փրկութեան մերոյ  
« հոգի հօր եւ որդոյ <sup>2</sup> : »

Իսկ հատուցումն անջատեալ հոգ-  
ւոց ի հրաժարիլ նոցա յաշխարհե, ըստ  
ուսուցանելոյ սրբոյն Գրիգորի Լու-  
սաւորչին ե այսպէս : « Որքսուրբքն են'  
« ի Քրիստոս մերձ լինին. զի ուր են  
« եմ, ասե, անդ եւ պաշտօնեայն իմ  
« եղիցի : Դարձեալ. Իբրեւ երկրաւոր  
« կեանքս ի ձեռն մահուան ի գլուխ  
« ելանեն, ՀՈԳԻՔՆ ՅՂԱՐԿԻՆ առ Աստ-  
« ւած' որ ետ գնա. եւ մարմինն դառ-

---

<sup>1</sup> Շարական. 2 : — <sup>2</sup> Յիսուս որդի :

« նայ ի հող՝ յորմէ ստեղծաւ յԱրար-  
« ջհն : Եւ սուրբ եւ արդար հոգեացն  
« ընդառաջ գան հրեշտակք, եւ սըր-  
« բոցն հոգիք. եւ տանին առաջի Աս-  
« տուծոյ սաղմոսիւք եւ օրհնութեամբ  
« եւ երգովք հոգեւորօք. գովեն զամե-  
« նագօր փառսն տէրութեան ամենա-  
« սուրբ Երրորդութեանն. եւ գոհանան  
« զերախտաւոր բարութենէն. որ փո-  
« խէ յերկրաւորացս յերկնաւորսն ,  
« յանարգութենէս ի պատիւ , զհրա-  
« լիրեայսն եւ զկոչեցեայսն յիւր ար-  
« քայութիւնն եւ ի փառսն<sup>1</sup> : » Եւ յայլուր  
ասե՛ « Իսկ որ ի սուրբ սերն Քրիստոսի

---

<sup>1</sup> Յաճախասլատում. 152, 153 :

« հաստատեալ են՝ որք զանձինս իւ-  
« րեանց ետուն ի մահ... ապրեալք լի-  
« նին...: Եւ բացցին դրունք կենաց  
« բարերարութեան շնորհօք հոգւոյն  
« սրբոյ վերին կայանիցն՝ ուր ժո-  
« դովք սրբոցն են հանգուցեալք<sup>1</sup>: »  
Իսկ յաղագս ՆԵՐԵԼԻ ՄԵՂՕՔ ՆՆՋԵՅԵԼՈՅ՝  
եւ թողեալ մահուչափ մեղաց զապաշ-  
խարանսն ո՛չ վճարողաց աստ՝ աղօթս  
առնեմք ասելով. « Սրն արժանի ողոր-  
« մութեան քաւութեան եւ թողութեան  
« մեղաց<sup>2</sup>. » Եւ վերագոչեմք յեկեղեցիս.  
« Որ թողութեանց ես տուող Ս.ստուած՝  
« թո՛ղ զմեղս մեր ննջեցելոց<sup>3</sup>. եւ հանգն

---

<sup>1</sup> Յաճ. 117. — <sup>2</sup> Ժամնադի: — <sup>3</sup> Շարակ. 117:

« Ի խորանի քում Ի յարքայական Ի  
« հանգստեան <sup>1</sup>. » եւ դարձեալ շարա-  
կան. « Ահեղ խորհուրդ քահանային. »  
Վասն որոյ եւ մաղթէ քահանայն Ի  
սուրբ պատարագին ասելով. « Յիշեան  
« տեր եւ ողորմեան եւ գթան Ի հոգիս  
« հանգուցելոց. հանգո՛ զնոսա եւ յու-  
« սաւորեան եւ դասաւորեան ընդ սուրբս  
« քո յարքայութեանդ երկնից. » Քան-  
զի այսպէս ուսոյց սուրբ Լուսաւորիչն  
մեր յասելն. « Իսկ զհաւատացելոց մե-  
« ղուցելոց եւ խոստովանողաց եւ  
« ապաշխարհողաց՝ եւ հաղորդելոց  
« փրկական խորհրդոյն եւ հրաժարե-

---

<sup>1</sup> Շարական. 121 •

« լոց յաշխարհէ, եւ նոցա ԿԱՏԱՐԵՍՅԻՆ  
« ՅԻՇԱՏԱԿՔ Քրիստոսի պատարա-  
« գան, եւ աղօթիւք եւ գթով տնանկաց.  
« եւ այլ բարի գործովք. զի վերջնոցն  
« բարեգործութեամբք ՀԱՆԳՈՒՅԵԱԼԻՔՆ  
« նորոգեսցին նորոգութեամբ կենացն  
« անվախճանից <sup>1</sup> : »

Վասն որոյ եւ տեղին՝ յորում կան  
այսպիսի ննջեցեալ հոգիք՝ որ կարօտ  
են օժանդակութեան եկեղեցւոյ, կոչի  
ի մեզ ԿԱՅԱՆ. զոր այլք կոչեն ՔԱՒԱՐԱՆ  
կամ մաքրարան : Իսկ զանգեղջ ՄԵ-  
ՂԱԻՈՐՍ եւ զամբարիշտս եւ զանհա-  
ւատսն զիտեմք լինել արդէն իսկ ԱՆՍՐ-

---

<sup>1</sup> Յաճախասպառում. 160 :



ԳԵՍԼՍ ԵՆ ԴՍՏԱՊԱՐՏԵՍԼՍ Ի ԳԵՀԵՆԻ ՈՒՍԱԽԻ  
ասեմք բանիւն սուրբ ԼՈՒՍԱԼՈՐՋԻՆ :

« Այլ կայանք են նոցա որք արհա-  
« մարհեցին գօրէնս նորա, եւ ծառայե-  
« ցին դժնդակ ցանկութեանց անխտիր  
« եւ պէս պէս չարեաց. որք ժառան-  
« գելոց են գարտաքին խաւարն :  
« Խաւարի Է աստ արտաքին չարն. որոց  
« խաւարեայ են միտք եւ զգայութիւնք,  
« եւ օտարացեայ են ի կենաց անտի...  
« Եւ են անդ ի ՀՈՒՐ ԳԵՀԵՆԻ. ուր լայ  
« աջաց Է եւ կրճել ատամանց <sup>1</sup> : »

---

<sup>1</sup> Յանախասպատում . 433 :

« Կաթողիկէ եկեղեցին հաւատայ եւ ուսուցանէ  
« թէ՛ գոյ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ դատաստան եւ վճիռ  
« ԱՆՄԻՋԱՊԷՍ յետ մահուան, առ ի որոշել ըզ-

Իսկ սուրբ առաքեալն ՊԵՏՐՈՍ, և  
ԳԼՈՒԽ առաքելոց սրբոց, և ՎԷՄ  
հաստատութեան ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵ-  
ՑԵԱՅ. որպէս երգեմք. « Որ ԳԵՐԱԳՈՅՆ  
« ընտրելոց ԱՌԱՔԵԼՈՅՆ դասուց՝ ԱՆ-  
« ԻԱՆԵՑԵՐ լինել գերանելին ՁՊԵՏՐՈՍ,  
« ԳԼՈՒԽ սուրբ հաւատոյ, ՀԻՄՆ ԵԿԵ-  
« ղեցույ՝ : » Եւ սուրբ ԼՈՒՍԱԼՈՐԻԶՆ մեր

---

« Վիճակ իւրաքանչիւր՝ արդար եւ մեղաւոր՝ հո-  
« գեաց » : Ահա բանք Շնորհալուոյն .

« Զի յորժամ ո՛չ գիտես կոչիս (մեռանիս) .

« Եւ (յայնժամ) ըստ գործոց քոց պահանջիս  
(դատիս) .

« Եթէ չունիս պատասխանիս, (մեղաւորդ) .

« Յանլոյժ խաւար բանտ (ի դժոխս) արկանիս :

Եւ ի ժամագրքին . « Քեզ միշտ մերձ ծանի՛ր .  
քուն մահուն եկեալ, ՔՆՆ ՕՂԴԱՏԱԻՈՐ . Եւ այլն » :

(Ծանօթ. Տպ.) :

<sup>1</sup> Շարական. 19 :

ասե . Քրիստոսագունդ եւ խաչակիր  
ԱՌԱՔԵԼՈՑԵՆ, որոց ԳԼԽՍ.ԻՈՐՆ ՊԵՏՐՈՍ<sup>1</sup>»  
եւ թե՛ « Արար ԶՆԱ ՎԷՄ հաստա-  
տուքեան ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԵԱՅ <sup>2</sup>: »

Եւ որպէս ԻՐԱՔԱՆՁԻՐ առաքելք  
ունին ի Քրիստոսե ՁԻՇԽԱՆՈՒԹԻԻՆ ա-  
ռաքելական . նոյնպէս եւ ԱՄԵՆԱՅՆ Ա-  
ԹՈՌՔ՝ ՈՐՔ ՈՒՆԻՆ ՁՈՐԻՆԱԻՈՐ յաջորդու-  
թիւն առաքելոց , աստուածային իրա-  
ւամբք ՌԵՆԻՆ զամենայն իշխանու-  
թիւն, եւ ԶԻՐԱԻԱՍՈՒԹԻԻՆՍՍ առաքե-  
լոց՝ ԸՍՏ ԻԻՐԵԱՆՅ ԿԱՐԳԻ, <sup>3</sup> եւ ՍՍ.Հ-

---

<sup>1</sup> Ա.գաթ. 30: — <sup>2</sup> Ա.գաթ. 198:

<sup>3</sup> Խորհրդով եղեալ է՝ թէ ըստ իւրեանց ԿԱՐԳԻ  
եւ ՍՍ.ՀՄԱՆԻ, ի զգաստութիւն ասողաց՝ թէ ամե-  
նայն առաքելք հաւասար են, նոյնպէս եւ չորք  
աթոռք նմանահանգոյն : (Ծանօթ. Տպ.) :

ՄԱՆԻ. որպէս ուսուցանեն սուրբ ԳԻՐԲ  
Եւ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՅՑ սրբոց ՀԱՐՅ, Եւ  
ԺՈՂՈՎՈՅ. ըստ այնմ. « Ուսուցէք նոցա  
« պահել զգամենայն՝ որ ինչ պատուի-  
« րեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ  
« եմ զգամենայն աւուրս, մինչեւ ի կա-  
« տարած աշխարհի <sup>1</sup> : »

Եւ ԽՈՐՀՈՒՐԳԻՑ սուրբ եկեղեցւոյ ԵՕԹՆ  
ԵՆ, յորոց մինն է ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄԵ.  
զոր պարտ է մատակարարել ԾԱՆՐ ՀԻ-  
ԽԱՆԳԱՅ՝ օժմամբ իւրոյ ձիթոյ օրհնե-  
ցելոյ ի Քահանայե, ըստ պատուիրելոյ  
մեծին Յովհաննու իմաստասիրի ի ՓԱ.  
կանոնի յազգային ժողովի անդ. ուր

---

<sup>1</sup> Մատթէոսի. ԻԸ 20 :

ասե. « Արժան է զհիւանդացն ձեք  
« Քահանային օրհնել ըստ իւրում ա-  
« դօքիցն : » Որպէս եւ առաքեալն  
Յակովբոս պատուիրէ ասելով՝ « Եթէ  
« Հիւանդանայցէ ոք ի ձեռք, կոչեսցէ՝  
« գերիցունս եկեղեցւոյն՝ եւ արասցեն  
« ի վերայ նորա աղօթս, ՕԾՅԵՆ ԻԻՂՈՎ,  
« յանուն տեառն. եւ աղօթքն հաւա-  
« տովք փրկեսցեն զաշխատեալն, եւ  
« յարուսցէ զնա տէր. եւ եթէ ՄԵՂՍ  
« ինչ իցէ գործեալ ԹՈՂՅԻ ՆՄԱ.<sup>1</sup> : »

---

<sup>1</sup> Յակովբոս • Ե 14 13 :

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to its orientation and the quality of the scan.

Handwritten text at the bottom of the page, possibly a date or a signature, oriented horizontally.

Եւ առ ի ԲԱՌՆԱԼ զգայթակղութիւն՝  
ԱԶԳՈՎԻՆ արժան համարեցաք :

Նախ՝ ոչ երգել զՆԶՈՎՍՆ Լեւոնի  
եւ ժՈՂՈՎՈՅՆ Քաղկեդոնի, յեկեղե-  
ցական պաշտամունս մեր՝ ի շարա-  
կանե եւ ի ձեռնադրութեան գրոց ԲԱՌ-  
ՆԱԼՈՎ . եւ այլն :

Երկրորդ՝ ՈՉ ՅԻՇԵԼ ի պատարագի  
ԶԱՆՈՒՍԱՆՍ՝ Յովհաննուորոտնեցւոյն,  
Դրիգորի եւ Մովսիսի տաթեւացեաց :

Երրորդ՝ ՈՐ ԵՒ ԻՅԷ ԲԱՆ՝ որ վասն

ՀԱՒԱՏՈՅ՝ ՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ՅԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՆ ԵՒ ԻՍՈՒՐՔ ԿԱՐԱ, ԵՔԷ ՂԱՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ<sup>1</sup> ԵՐԻՅ ՍՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՅ՝ ՉՈՐԱ ՍՈՆԵՄՔ. (ՈՐՔ ԵՆ. Ս. առաջին ժողովն Նիկիոյ Երեք հարիւր տասն եւ ութ սուրբ Հայրապետաց. Բ. առաջին ժողովն Կոստանդնուպօլսի հարիւր յիսուն Հայրապետաց. Գ. առաջին ժողովն Եփեսոսի Երկու հարիւր Հարայպետաց) : ՄԻՇՏ ԸՆԴՈՒՆԵԼԻՔ ԵՆ, ԵՒ ՆՈՅԻՆ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆՆ ԵՐԳԱԿԵԾԻՄՔ:


---

<sup>1</sup> Չի՛ք տարակոյս թէ Են համաձայնք ի ԲԱՆՍ, թէպէտ եւ ո՛չ ի նոյն ԲԱՌՍ : Եւ այսու բացարձակ խոստովանութեամբ, Եկեղեցիս Հայոց ընդունի զամենայն ՕՐԻՆԱԻՈՐ Ժողովսն: (Ծանօթ).



Զորրորդ՝ առ ի ԱՆԽԱԽՏ ՊԱՀԵԼ  
միշտ գամենայն ՎԵՐՈՅԳՐԵՍԱԼՍ մի ըստ  
միոջե՝ ըստ վարդապետութեան սուրբ  
Եկեղեցւոյս մերոյ, սրբոյն Գրիգորի  
Լուսաւորչին, եւ սրբոյն Ներսէսի  
Շնորհալոյն, եւ գայլ ամենայն վար-  
դապետութիւնս նոցին՝ ՍՄԲՈՂՁ եւ ԱՆ-  
ՊԱԿԱՍ ԽՈՍՏՈՎԱՆԻՄՔ. եւ այնպէս ՃԱ-  
ՆԱԶԵՄՔ եւ ԸՆԴՈՒՆԻՄՔ ՄԵՔ ԱՄԵՆԵՔԻՆ՝  
ի միոյ սուրբ աւագանե ծնեալ Լուսա-  
ւորչագաւակ ՀԱՅՍՁԳԻ հարագատքս :

Ռ Մ Կ Յ. Մարտի 8:



The first part of the paper is devoted to a general  
 consideration of the problem. It is shown that the  
 problem is equivalent to the problem of finding  
 the minimum of a certain functional. This  
 functional is defined as follows:

$$J(u) = \int_{\Omega} |\nabla u|^2 dx + \int_{\Omega} f(x) u dx$$

where  $\Omega$  is the domain of interest,  $\nabla$  is the gradient operator, and  $f(x)$  is a given function. The minimum of this functional is attained at a function  $u$  which satisfies the boundary value problem

$$\Delta u = -f(x) \text{ in } \Omega, \quad u = 0 \text{ on } \partial\Omega$$

where  $\Delta$  is the Laplace operator and  $\partial\Omega$  is the boundary of  $\Omega$ . The existence and uniqueness of the solution of this problem is guaranteed by the theory of elliptic partial differential equations.

DEPARTMENT OF MATHEMATICS  
 UNIVERSITY OF CALIFORNIA, BERKELEY

## ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

**Ս**յա ամենայն բան՝ վասն սիրոյ եւ  
խաղաղութեան կարգեալ սահմա-  
նեցաւ ԽՈՐՀՐԴՈՎ Եւ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ  
ՀՍ.ՄԱՅՆ ԱԶԳԻՍ Եկեղեցականաց եւ  
աշխարհականաց, որ ի կայսերական  
մայրաքաղաքիս. եւ յոգնախումբ սի-  
րայորդոր սիւնհողոսիւ իրաւունս դա-  
տեալ ՎՃՌԵՅՄԻ. յորս գումարեալ էին  
այսոքիկ : Աստուածարեալ Կիրակոս  
սրբազան Կաթողիկոսն տանն Կիլիկիոյ.  
որ պատահմամբ իմն այժմ գտաւ աստ  
ի կոստանդնուպօլիս : Արժանաժա-

ուանգ սրբազան Պատրիարգ եւ Արքեպիսկոպոսն Կոստանդնուպօլսի՝  
անդրիանուպօլսեցի Տէր Պօղոս աստուածաբան Վարդապետն : Արքեպիսկոպոսք եւ Գործակալք տիեզերական սուրբ Աթոռոց՝ ԵԶՄԻԱԾՆԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ : Եւս եւ այլ Արքեպիսկոպոսք, աստուածիմաստ Վարդապետք, եւ բոլոր եկեղեցեաց ՔԱՆՍՏԱՆՅԱՅԻ : Գերապատիւ ազգախնամ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ, Յարգելի ԻՇԽԱՆԻ, Հաւատարիմ ՄԻԹԵՎԷԼԼԻԻ եւ Գանձապետք, Աշխատասէր եկեղեցականք, եւ ամենայն ԱՐՉԵՍՏԱԻՈՐԱՅ ԳԼԽԱՌԻԻ :

Այսոքիկ ԱՄԵՆԵՔԵԱՆ միաբան հաճութեամբ ընդունեալ՝ իւրաքանչիւրոք ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԿՆՔԵՅԻՆ զարձանագրութիւնն՝ այս ամենայն բանից հաս-

տատուքեան ՄՍ.ՀՄԵՐԸ . որոյ իսկն է ի պահեստի ի պատրիարգարանի ամենայն Հայոց . եւ օրինակեալ եղաւ եւս ի կրկին դպրութեան ի դիւանի պատրիարգարանի, եւ ի Գրքատան ազգիս մայր դպրատան : Եւ այս իսկ նոյնօրինակ ըստ ամենայնի զգուշութեամբ ՏՊԵՑԱԻ. եւ իւրաքանչիւր տպագրելոցս ի ճակատն պատրիարգական ԿՆՔՈՎ. ԿՆՔԵՑԱԻ, ի նշան հարազատ նոյնութեան ընդ իսկ գաղափարին :

Զոր ահա ԸՆԾԱՅԵՄՔ յուսաւորչերամ Քրիստոսասէր ազգիս ի գիտութիւն եւ ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ. ի ցոյց միակամութեան ընդ ազգասէր ժողովոյս . եւ ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ուղղափառութեան հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցւոյս. զոր յամեներանեայ սուրբ

Լուսաւորչե մերմէ եւ ի նորին շառաւի-  
ղաց՝ սրբազան Հարցն մերոց վարդա-  
պետութեանց Ա.Ի.Ս.Ն.ԴԵՍ.Լ ՊՍ.ՀԵՄ.Ք Ա.Ն-  
ԽԱ.ԽՏ: Եւս եւ գամենայն բարեկարգու-  
թիւնս եւ զեկեղեցական ծեսս եւ զա-  
րարողութիւնս՝ գորս ի սկզբանէ ու-  
նիմք ուղղափառութեամբ, անփոփոխ  
ՊՍ.ՀԵՄ.Ք, եւ ի գործ ածեմք անայլայլելի  
նոյնութեամբ. եւ զանիրաւի ամբաս-  
տանողս մեր ի վերայ այսոցիկ՝ բացէ  
ի բաց հերքեմք միշտ ընդ միշտ :

Որպէս զի յայտնի լիցին մեր ամե-  
նեցուն ԿՍ.Մ.Ք եւ ՀՍ.ՃՈՒԹԻԻՆ. Թե ոչ  
խորշիմք յԱստուածախօսբանից սուրբ  
գրոց, եւ հոգեկիր սրբազան Հարցն  
մերոց. եւ զնոյնս ՔԱՐՈՋԵՄ.Ք ամենայն  
Հայաստանեայցս սուրբ Եկեղեցոյ  
Քրիստոսի լրութիւն. եւ ՋՈՒՂՂԱՓՍ.Ո.ԴՍ.

ԻՍՆՈՒԹԻՒՆՍ մեր եւ զբարի վարս՝ իբր եւ  
ոսկի եւ արծաթ եւ ականս պատուա-  
կանս հանդերձեալ եմք տանիլ առաջի  
փառաց արողոյն Աստուծոյ, եւ ընդու-  
նիլ զխոստացեալ վարձս յաւիտենա-  
կան կենաց :

Ապա եւ ըստ բանի սրբոյ Շնորհալ  
ւոյն : « Եւ որ ոք յետ գայտոսիկ լսելոյ  
« ի մենջ՝ գայթակղեսցի դարձեալ ի  
« մեզ՝ ո՛չ հաւատայով ասացելոցս ,  
« ինքնտացեպատասխանի՝Քրիստոսի  
« յաւուր դատաստանի նորա իբր եւ  
« զպառակտող անդամոց նորին <sup>1</sup> : »

Հնապա՛ն սիրելիք մեր ի Քրիստոս,  
համայն ՆՍԻՆԻԲ մեր ցանկային գայս

---

<sup>1</sup> Ընդհանրակ . 100 :

նութեան ամենեքեան աշխատեսցնւք.  
ըստ չափու կարողութեան մերում,  
նիւթ պատրաստեսցնւք գլօժարութիւն  
հոգւոյ, զհամակամութիւն սրտի, ԶՃԸՇ-  
ՄԱՐՏՈՒԹԻՒՆ խօսից. եւ մանաւանդ՝  
զոսկի եւ զարծաք՝ զեղբայրսիրութիւն  
ըստ որում խրատե զմեզ առաքեայն.  
« Սիրելիք՝ սիրեսցնւք զմիմեանս, զի  
« սեր յՍ.ստուծոյ է. եւ ամենայն որ  
« սիրե՛ յՍ.ստուծոյ է ծնեայ, եւ ճանաչե  
« զՍ.ստուած.... զի Ս.ստուած սեր է...  
« եւ որ կայ ի սերն՝ բնակեայ է յՍ.ս-  
« տուած, եւ Ս.ստուած ի նմա բնա-  
« կէ ...: եթէ ոք ասիցե՛ եթէ սիրեմ  
« զՍ.ստուած, եւ զեղբայր իւր ատիցե,  
« սո՛ւտ է<sup>1</sup>: » Եւ « Ամենայն՝ որ ատե

---

<sup>1</sup> Ա. Յովհ. Գ 7. 20:



նութեան ամենեքեան աշխատեսցնւք.  
ըստ ջափու կարողութեան մերում,  
նիւթ պատրաստեսցնւք գլօժարութիւն  
հոգւոյ, զհամակամութիւն սրտի, ԶՃԼՇ-  
ՄՍ.ՐՏՈՒԹԻԻՆ խօսից. եւ մանաւանդ՝  
զոսկի եւ գարծաթ՝ գեղբայրսիրութիւն  
ըստ որում խրատե զմեզ առաքեայն.  
« Սիրելիք՝ սիրեսցնւք զմիմեանս, զի  
« սեր յԱստուծոյ է. եւ ամենայն որ  
« սիրե՛ յԱստուծոյ է ծնեալ, եւ ճանաչե  
« զԱստուած.... զի Աստուած սեր է...  
« եւ որ կայ ի սերն՝ բնակեալ է յԱս-  
« տուած, եւ Աստուած ի նմա բնա-  
« կե ...: եթէ ոք ասիցե՛ եթէ սիրեմ  
« զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցե,  
« սո՛ւտ է<sup>1</sup>: » Եւ « Ամենայն՝ որ ատե

---

<sup>1</sup> Ա. Յովհ. Դ 7. 20:

« գեղբայր իւր, մարդասպան է <sup>1</sup> : »

Զայս տաճար Ս.ստուծոյ մի քայ-  
քայեալ կործանեսցուք. զի որ գայն  
քակէ եւ կործանէ, եւ ինքն գմահու կրէ  
գապականութիւն. ըստ այնմ : « Եթէ  
« ոք գտաճար Ս.ստուծոյ ապականէ,  
« ապականեսցէ զնա Ս.ստուած <sup>2</sup> : »

ԶՄԻՌԻԹԻՒՆ ազգիս անձնասիրու-  
րութեամբ ՄԻ՛ ԲԱԺԱՆԵՍՑՈՒՔ. զի Ս.ս-  
տուածային է վճիռս. « Ս.մենայն տուն  
« բաժանեալ յանձն՝ կործանի <sup>3</sup> : »

Կենդանական գորութիւն ի գլխոյն  
իջանէ յանդամս. եւ մի է մեր ամենե-  
ցուն գլուխն Քրիստոս. եւ ամենեքին  
մի մարմին եմք եւ անդամք գլխոյն

---

<sup>1</sup> Ս. Յով. Գ 15: — <sup>2</sup> Ս. Կոր. Գ 17: — <sup>3</sup> Դով. ԺՍ. 17:

Քրիստոսի . գմիմեանց վերս բժշկեացն .  
զի բժշկութիւն եւ առողջութիւն  
անդամոց առ գլուխն վերաբերի :  
Ուստի եւ առաքեալն հրամայե . « Խա-  
« յաղութիւն արարեք ընդ միմեանս<sup>1</sup> : »  
Զի առ եղբարս խաղաղութիւնն 'նշանե  
առ Աստուած խաղաղութեան : Զմիջ-  
նորդն խաղաղութեան Քրիստոս մի  
խոովութեան պատճառս կացուցուք  
ի միջի մերում : Ճշմարիտ վեմն մեր  
Քրիստոս յոր հաւատովք անդրդուելի  
պնդեալ եմք, մի համարեսցի վեմ գայ-  
թակղութեան եւ քար գլորման :

Հեզութիւնն ' զըմբոստութիւն գիշու-

---

<sup>1</sup> Ա. Թեոաղ. Ե 13 :

ցանկ, որպէս եւ ջուրն գիւր շիջուցանէ . չարն՝ բարեաւ յաղթի :

Զխոնարհութիւն ստասցուք, զի ընդ Քրիստոսի բարձրացուք. ամենեցուն մեր կագ եւ կռիւ ընդ ամենեցուն քշնամին ընդ սատանայ ուղղեսցուք :

Զորոմն չարին՝ գիեռ, զնախանձ եւ զատելութիւն՝ յանդաստանէ եկեղեցւոյս արմատաքի՛ խլեսցուք :

Զխաղաղութիւնն գործիստոսարեամբ եւ մահու խաչիւն շնորհեաց մեզ, մի հեղգացցուք բանիւ բերանոյ՝ եւ գործով հաստատել ի մեզ : Մեժ եւ սքանչելի են շնորհք խաղաղութեանս. սա ինքն է արքայութիւն, անվախճան կենդանութիւն. զի Աստուծոյ է որդիութիւն, ընդ Քրիստոսի քագաւորութիւն.

գերանութիւնն խաղաղարարաց ի մեզ սեփհականեսցո՛ւք, զի եւ զայս ամենայն երջանկութիւնն յաւիտեան ժառանգեսցուք :



Հաւատալի է թէ այս անցք ազգային, ո՛չ ի մարդկային ինչ ակնածութենէ եղեալ դու, կամ թեթեւաբար խորհրդով ոմանց առ ի վորձ ինչ վորձեւոյ. այլ իճշմարիտ յաւետարանական սիրոյ եւ խաղաղութեան շարժեալ ԱՌԱՋՆՈՐԳԻՔ ԷՆ ԻՇԽԱՆՔԻ ժողովրդեան, որք զրեթէ երկու ամսով չափ ամենայն հոգևով դուն գործեցին՝ զերկատեալ մասունս ի մի հիւսել : Քանզի՛ եղբարց եւ ազգիս միոյ բարութիւն եւ վայելչութիւն, է՛ ի միաբանութեան :

Ծանօթ. Տպ.

## ՎԱՐՔ ՔՐԻՍՏՈՆԵՒ

Խոստովանիմ եւ հաւատամ, լինել  
որդի շնորհիւ հոգւոյն,  
Միայնոյ՝ Սուրբ՝ Առաքելական՝ Կա-  
թողիկէ Եկեղեցւոյն :

—

Զմի Աստուած փառաւորել, եւ զՅիսուս  
փրկիչդ սիրել.

Աստուածածինն միջնորդ ունել, Լու-  
սաւորչին զաւակ լինել.

Զերանեալ սուրբս՝ յանր աղօթել, եւ զհրեշ-  
տակս առ ի պատուել.

Վարդապետաց հարանց լսել, ի զժտու-  
թեանց բանից փախչել.

Խաղաղութեան զկեանս զոհել, առ Աստուծոյ յորդիս կոչել.

Զազգս համօրէն մարդկան սիրել, եւ զթշնամիս օգտել շահել.

Զորոց բարիս չէ մարտ ասել, հրաման է լեզուիդ լռել.

Միշտ ուսանել՝ կարդալ գրել. մի հեղգանալ զգիրս քննել.

Զժամանակդ առ ի չվատնել, ի կարեւորսըդ միտ դնել.

Յառեից մեղաց զգոյշ լինել, ի կրից մարմնոյ զհոգիդ սրբել.

Աշխարհայնովք զաշխարհս ատել, զմարմին հոգւոյն ծառայ գերել.

Զահեղ զանվերջ դժոխս անել, զաղէտս որ անդ՝ ի յնշ ածել.

Ջանէժս մահուն ի լուծանել, ի դատաստան հիշտ մտանել.

Միակ հոգիդ առ ի փրկել, զարքայութիւն երկնից զնել :

Ջայս սակաւուք՝ խրատս սերտէ,  
Ընդ բոլոր կեանսդ՝ միշտ կատարէ :

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ  
ԽԱՊԱՐԱՃԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ  
ՈՐ Ի Փարիզ :

.....

Այր մի եթէ ուզես ի կառս իւրում ընթեռնոյր..... ասէ հոգին ցՓիլիպպոս, մատիւր եւ յարեաց ի կառսդ յայդոսիկ. եւ ընթացեալ Փիլիպպոս լսէր զի ընթեռնոյր... եւ ասէ զիտիցէս արդեօք՝ զոր ընթեռնուսդ. եւ նա ասէ, զի՛նրդ կարիցեմ զիտել եթէ ոք՝ ոչ ԱՌԱՋՆՈՐԴԵՍՅԵՐՆՃ :

(Գործ Ը 29-30) :





---

Փարիզ, Տպագրութիւն Արմ. ի Տպար. Վալտերի :  
Paris. Typ. Arménienne de Walder, r. Bonaparte, 44.







3612

2013



